



# Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

## Խորհրդակցություն ոստիկանությունում

Ապրիլի 20-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն աշխատանքային խորհրդակցություն անցկացրեց: Մասնակցում էին ոստիկանության պետի առաջին տեղակալ Արման Սարգսյանը, բրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Արտակ Կարապետյանը, գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության եւ ընտանիքում բռնության կանխարգելման վարչության, ինչպես եւ նույն վարչության տարածքային ստորաբաժանումների ծառայողները:



Վալերիյ Օսիպյանը ներկայացրեց անչափահասների մասնակցությամբ կատարված հանցագործությունների վիճակագրական տվյալներ ու կատարեց համեմատական վերլուծություն՝ դրական գնահատելով ծառայության աշխատանքը: «Պետք չէ ձեռք բերածով բավարարվել, այս ոլորտում մենք միշտ անելիքներ ունենք. անտարբերությունը անչափահասի նկատմամբ՝ անտարբերություն է ապագայի հանդեպ», - ընդգծեց ոստիկանության պետը: Վալերիյ Օսիպյանը հանձնարարեց մշակել կանխարգելիչ միջոցառումների երկարաժամկետ ծրագիր, որի իրականացմանը պետք է ներգրավվեն պետական այլ գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կառույցների ներկայացուցիչները, ինչպես եւ ծնողներն ու ուսուցիչները: Ոստիկանության պետը հանձնարարեց նաեւ հատուկ ուշադրություն դարձնել այն միջոցառումներին, որոնք միտված են անչափահասների կազմված հանցավոր խմբերի ձևավորման բացառմանը՝ ընդգծելով, որ թերացողներին չի հանդուրժի, իսկ սրտացավ ծառայողներին սիրով կապարդեատրի: Այս առումով Վալերիյ Օսիպյանը հանձնարարեց օրակարգային դարձնել անչափահասների զբաղմունքային հետաքրքրվելը, նրանց շրջապատն ուսումնասիրելը՝ կանխարգելիչ միջոցառումներն առավել ճշգրիտ կազմակերպելու եւ իրականացնելու համար:

Աշխատանքային խորհրդակցությունը շարունակեց ոստիկանության պետի առաջին տեղակալ Արման Սարգսյանը: Նա ներկայացրեց քննարկեց ոստիկանության պետի հանձնարարած կանխարգելիչ միջոցառումների երկարաժամկետ ծրագրի մշակմանը վերաբերող հարցեր: Քննարկման առարկա դարձան նաեւ անչափահասներին հանցագործությունների մեջ ներգրավելու դեպքերը բացառելու ուղղությամբ ոստիկանության ծառայողների անելիքները:

## Միայնակ ապրող կնոջը սպանել էին

Ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողների արդյունավետ համագործակցության շնորհիվ բացահայտվեց առանձնապես ծանր հանցագործության դեպք: Խոսքը 2018 թ. մայիսին Սեւանի թերակղզում կատարված սպանության մասին է: Հիշեցնենք, որ մայիսի 31-ին իրավապահները թերակղզուց ամառանոցներ տանող ճանապարհին հայտնաբերել էին սպիտակ «ժիգուլի», որի մեջ սպանված վարորդն էր: Գյումրիի բնակիչ, 26-ամյա Ժորա Մարտիրոսյանի դիակի գնմությանը գլխին հայտնաբերվել էին վնասվածքներ, իսկ դեպքի վայրում արյան հետքեր եւ արմաման հետքերով քարեր: Հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ երիտասարդ Գյումրիից ուղևորներ էր տեղափոխել Սեւան, եւ հենց ուղևորներն էլ սպանել էին նրան:



էջ 2

## Տնօրենի ապօրինությունները

Ոստիկանության ԿՂԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման, Շիրակի մարզային վարչությունների եւ Մուշի բաժնի ծառայողների օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ Գյումրու թիվ 38 դպրոցի նախկին տնօրենը ապօրինություններ է թույլ տվել: Մասնավորապես, օգտագործելով պաշտոնեական դիրքը, 2005-2015 թթ. տարբեր ժամանակահատվածներում դպրոցում պահակ է ձեւակերպել փեսային, փեսայի հորը, դռնապահ՝ փեսայի մորը եւ մի կնոջ, որոնք իրականում աշխատանքի չեն ներկայացվել, իսկ նրանց անվանք դուրս գրված աշխատավարձը շուրջ 3 միլիոն 90 հազար դրամ, յուրացվել է: Հարուցվել է քրեական գործ:



## Բացահայտում է ոստիկանությունը

Ոստիկանության ԿՂԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ «Արագածոտն» ջրօգտագործողների ընկերության տնօրինությունը ապօրինություններ է թույլ տվել:



Մասնավորապես, օգտվելով ջրային կոմիտեի իրավասու աշխատակիցների ծառայության նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքից եւ ջրամատակարարման ու ջրօգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում ստեղծված հնարավորություններից՝ իրենց կարգադրիչ եւ այլ լիազորությունները կազմակերպության շահերին հակառակ եւ իրենց կամ ուրիշ անձանց օգտին օգտագործելու կամ այլ անձանց վնաս պատճառելու դիտավորությամբ, անձամբ, ինչպես եւ կազմակերպության մյուս աշխատակիցների ներգրավմամբ, խախտել են բաժանորդների հետ կնքված 2016-

2019 թթ. ջրամատակարարման ծառայություններ մատուցելու պայմանագրերի պահանջները:

Առանց ջրաչափերի տեղադրման մատակարարված ջրի ծավալները խորանարդ մետրով գրանցելու փոխարեն գրանցել են հեկտարներով՝ դրանով իսկ բաժանորդներին գրելով մատակարարված ոռոգելի ջրի ծավալները վերահսկելու հնարավորությունից: Հրամատակարարման արդյունքում առաջացած 35 տոկոս բնական կորուստների ծավալները ընկերության տնօրինությունը հավելագրել է ջրօգտագործողների հասույթի գումարների հաշվին: Այդ տվյալները ներառելով էլեկտրոնային մատյաններում եւ փաստացի ուժեղացնելով մատուցված ծառայությունների ծավալները՝ բաժանորդների կողմից ընկերության հանդեպ ունեցած դեբիտորական պարտքի հաշվեկշիռը ծանրաբեռնել են 654 միլիոն 800 հազար դրամով: Հարուցվել է քրեական գործ:

## Գողացել էր մեկ միլիոն դոլար

Ապրիլի 20-ին ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության եւ Հայաստանում ԻճՍ-տերապի ազգային կենտրոնական բյուրոյի ծառայողների ուղեկցությամբ Ամստերդամից Երեւան տեղափոխվեց Լիբերիայի քաղաքացի Ֆրանսիզ Վրեհ Ռեդդին: Նա 2009 թվականից ՀՀ ոստիկանության կողմից հետախուզվում էր առանձնապես խոշոր չափերով գողություն կատարելու մեղադրանքով: 55-ամյա Ռեդդին 2009 թ. նոյեմբերին ժամանել էր Երեւան, հանդիպել տեղի ընկերություններից մեկի տնօրենին ու, ներկայանալով գործարար, հայտնել էր, թե կարող է Հայաստան ներկրել մեկ միլիոն դոլարի ադամանդյա քարեր: Որպես երաշխիք հայ գործարարից պահանջել էր իրեն ցույց տալ կանխիկ մեկ միլիոն դոլար՝ պայմանավորվելով փողը վերցնել միայն ադամանդները ներկրելուց հետո: Հայ գործարարը նրան ցույց էր տվել պահանջած գումարը:



էջ 2

### Անպատժելիություն՝ երկու տարով

Ուժգին հարվածից երիտասարդն ընկավ գլուխը խփեց քարին եւ կորցրեց գիտակցությունը: **էջ 2**

### Թվացյալ մոռացյալը

Ռեստորանում մատուցողուհու աշխատանքը համատեղում էր մարմնավաճառության հետ: **էջ 3**

### Բռնվեց դեպքի վայրում

Հարկավոր էր շտապ հասնել դեպքի վայր. յուրաքանչյուր վայրկյանը կարող էր ճակատագրական լինել: **էջ 6**

## Հրագնային վնասվածք գերեզմանատան մոտ

Ապրիլի 19-ին հիվանդանոցից ոստիկանության Նոր Նորքի բաժնի հաղորդում է ստացվել, որ ծակած, արնահոսող վերքերով, շոկային վիճակում բուժօգնության է տեղափոխվել 39-ամյա տղամարդ: Քրեական օրենսգրքի 112 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Ապրիլի 20-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության, Նոր Նորքի բաժնի եւ Ավանի բաժանմունքի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ ապրիլի 19-ին Ավան թաղամասի գերեզմանատան մոտ ատրճանակով հիշյալ տղամարդուն մարմնական վնասվածք է պատճառել 1997 թ. ծնված Ռոման Բ.-ին: Ձեռնարկվում են միջոցառումներ Ռոման Բ.-ին եւ հանցագործության գործիք ատրճանակը հայտնաբերելու ուղղությամբ: Կատարվում է նախաքննություն:



Համակարգ

# Ոստիկանության գործերի լավագույն ծառայողը

Ոստիկանության հատուկ հանձնաժողովի որոշմամբ՝ 2018 թ. ոստիկանության գործերի լավագույն ծառայող է ճանաչվել ոստիկանության գործերի N գործառնական վաշտի հրամանատար, կապիտան Արման Ավագյանը:

Կապիտան Արման Ավագյանը տասնինը տարի ծառայել է ներքին գործերի, այժմ՝ ոստիկանության գործերի տարբեր ստորաբաժանումներում՝ շարքայինից մինչև վաշտի հրամանատար:

«Ճամկետային զինվորական ծառայությունից հետո որոշեցի համատեղել ոստիկանի եւ զինվորականի ծառայությունները եւ 2000 թ. ծառայության անցա ներքին գործերի հատուկ նշանակության ջոկատում որպես հրաձիգ», - մեզ հետ զրույցում նշեց Արման Ավագյանը:

Զորամասի եւ վաշտի հիմնական նպատակը հասարակական կարգի պահպանությունն է: Այդ կապակցությամբ կապիտան Ավագյանը ծառայությունից առաջ ղեկավարության հետ պլանավորում է իրականացվելիք աշխատանքը:

Արման Ավագյանի մասին գրուցեցինք նաեւ գործառնական շտաբի պետ, փոխգնդապետ Արթուր Ումրաշայանի հետ. «Պատասխանատու սպա է, եւ սպայի ամենակարեւոր հատկանիշներից մեկը, որ ունի կապիտան Ավագյանը, ենթակա ստորաբաժանման եւ անձնակազմի մեջ սոցիալական արդարության բարձր նշանողի ապահո-

վումն է: Եվ հենց դա է այն գլխավոր գրավականը, ինչի շնորհիվ նրա հրամանատարությամբ գործող ստորաբաժանումը միշտ ցուցաբերում է բարձր մարտական պատրաստակալության եւ պատրաստության արդյունքներ»:



Ցանկացած մասնագետի հաջողության գաղտնիքը նաեւ մշտապես սովորելու եւ կրթվելու մեջ է: Վաշտի հրամանատար Արման Ավագյանը ղեկավարության կողմից բնութագրվեց նաեւ որպես ինքնակրթությամբ զբաղվող սպա:

Կապիտան Արման Ավագյանի ծառայության մասին խոսեցինք նաեւ նրա ենթակալները:

«Շուրջ յոթ տարի ծառայում եմ կապիտան Ավագյանի հրամանատարությամբ: Նա օրինակելի սպա է, մենք շատ բան ու-

նենք նրանից սովորելու: Նա խստապահանջ հրամանատար է եւ դրա շնորհիվ է նաեւ, որ երկու տարի է՝ մեր վաշտը ճանաչվում է գործառնական լավագույն վաշտ»:

Լավագույն վաշտի լավագույն հրամանատարի խոսքով՝ ստորաբաժանման ղեկավարը չի կարող հասնել նման արդյունքի, եթե չունենա սրտացավ ծառայող ենթակալներ:

«Վստահ եմ, որ ոստիկանության գործերի լավագույն ծառայողի կոչմանն արժանացել եմ ոչ միայն իմ, այլեւ վաշտի ողջ անձնակազմի բարեխիղճ ծառայության շնորհիվ», - ավելացրեց 2018 թ. ոստիկանության գործերի լավագույն ծառայող Արման Ավագյանը:

Իսկ հաջորդ օրը ոստիկանության գործերի շարահրապարակում կանգնած էին նաեւ կապիտան Արման Ավագյանն ու իր վաշտը: Արդեն չորրորդ անգամ մեկնում են պետական սահման՝ մարտական հերթապահության:

Իսկապես, Արման Ավագյանը համատեղել է ոստիկանի ու զինվորականի ծառայությունները: Տարբեր համազգեստներ, հասարակական կարգի պահպանություն եւ մարտական հերթապահություն՝ երկու ծառայություններն էլ ուղղված են մեր երկրի ու ժողովրդի անվտանգությանը:

Բարի ծառայություն, սահմանապահ ոստիկաններ:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

## Վնասառժեղություն՝ երկու տարով

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության օպերատիվ խմբի ուղեկցությամբ Ռուսաստանի Պաշտպանության Վորո-



Նեմ քաղաքից Նայաստան տեղափոխվեց 2017 թվականի մայիսից հետախուզման մեջ գտնվող Սահակ Մոսիկյանը:

Քրեական Սահակ Մոսիկյանն ընկերների հետ մեկնելու էր Ռուսաստան՝ արտագնա աշխատանքի: Մեկնելուց առաջ որոշեցին մատաղ անել, գործերի հաջողության եւ բարի վերադարձի համար:

Նեմ քաղաքից Նայաստան տեղափոխվեց 2017 թվականի մայիսից հետախուզման մեջ գտնվող Սահակ Մոսիկյանը: Չեղարկելիք մարզի բնակիչ Սահակ Մոսիկյանին նախաքննական մարմնի կողմից առաջադրված մեղադրանքը քրեական օրենսգրքի 112 հոդվածի (դիտավորությամբ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելը) հատկանիշներով էր: Նախաքննական գործի վարույթը կատարվել էր հանցագործությունը կատարած անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմնավորումով:

Վերադարձի համար: Վնասառժեղություն հաշտում: Սահակը մորաքրոջ տղային՝ Հովսեփին, նույնպես հրավիրեց. նրա քրոջ ամուսինն էր Ռուսաստանում աշխատանքն ապահովել:

Կերան-խմեցին, օրինեցին մատաղն ու իրենց բռնած գործին հաջողություն ցանկացան: Երեկոյանում էր, նաեւ ցրտել էր, բայց օդուց տաքացած ու ժամի զգացողությունը կորցրած՝ շարունակեցին կերուխումը: Արդեն կերուխում էլ չէր. ուտելիքը վերջացել էր, մնացել էր օդին:

Հովսեփը, որ իրեն տիրական էր պահում փեսայի ապագա «աշխատողների» մոտ, կարգադրեց, որ մեկնումեկը գնա ուտելիք

բերելու: Նրա հրամայական տոնից վրդովված՝ ներկաներից մեկը կոպտեց, թե՛ ինքը գնա: Հետո Հովսեփի պահվածքը դարձավ քննարկման թեմա՝ իրեն հյուրի պես պահելու փոխարեն հրամաններ է տալիս...

Վեճը պատրաստ էր: Հետո նաեւ քաջքշուկ սկսվեց: Վերջին «խոսքը» Սահակին էր. բռնուցքի ուժը փորձեց ընդգոյցի դեմքին: Հարվածից նա ընկավ, գլուխը խփեց քարին եւ ուշագնաց եղավ:

Սահակը մորաքրոջ որդու հետ հեռացավ, իսկ մյուսները տեսնելով, որ վիրավորին օգնել չեն կարողանում, «շտապօգնություն» կանչեցին:

Վնասառժեղություն հիվանդանոցից էր: Մեկնած օպերատիվ խումբը պարզեց դեպքի հանգամանքները: Դատաբժկական փորձաքննությունն էլ պարզեց, որ տուժողի առողջությանը պատճառվել էր ծանր վնաս: Բայց մինչեւ դեպքի հանգամանքները կարգվեին, Սահակ Մոսիկյանը մեկնեց Ռուսաստան: «Վերադարձվե՞լ» երկու տարի անց:

Քրեական գործի կատարված վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

## Գողագեղ եր մեկ միլիոն դուլար

Սկիզբը էջ 1

Ֆրանսիացի Վրեհ Ռեդդին, գործարարի գիտությամբ, դուլարի տրցակները փաթեթավորել էր փայլաթիթեղով եւ մշակել անհայտ քիմիական նյութով, որպեսզի դրանք հնարավոր չլինի ծախսել: Նա հայ գործարարին հավաստիացրել էր, որ աղանձները բերելուց հետո ինքը մեկ այլ քիմիական նյութով կմշակի դուլարները՝ վերացնելով նախկին մշակման հետքերը: Այսպիսով, փայլաթիթեղով փաթեթավորված փողը դրել էր դուլարի մեջ եւ հայտնել, որ քիմիական գործընթացը մոտ տասնհինգ րոպե կտևի: Այդ ընթացքում հայ գործարարը դուրս էր եկել պատշգամբ՝ ծխելու: Որոշ ժամանակ անց Ռեդդին լքել էր Ֆրանսիա-



նը. գնացել էր իբր աղանձները բերելու: Նրա հետ կապը կորցնելուց հետո հայ գործարարը որոշել էր բացել փայլաթիթեղով փաթեթավորված փողը եւ տեսել էր, որ փաթեթներում սովորական թուղթ է:

Քննությամբ պարզվել էր, որ Ֆրանսիացի Վրեհ Ռեդդին, օգտվելով հայ գործարարի

պատշգամբում ծխելու հանգամանքից, իրական դուլարներով դուլար փոխարինել էր մեկ այլ դուլարով, որի մեջ եղել էին սովորական թղթեր՝ դարձյալ նմանատիպ փայլաթիթեղներով փաթեթավորված:

Ֆրանսիացի Վրեհ Ռեդդի նկատմամբ հետախուզում հայտարարելուց հետո ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները Ֆրանսիայում ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով համագործակցել են Շվեդիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Լիբերիայի եւ Ինտերպոլի անդամ մի շարք այլ երկրների գործընկերների հետ:

Շուրջ տասը տարի տեսած լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն, ի վերջո, արդյունք տվեցին, եւ հետախուզվողը Նիդեռլանդների Թագավորությունում հայտնաբերվելուց հետո արտահանվեց Ֆրանսիա:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

## Միայնակ ապրող կնոջը սպանել էին



Սկիզբը էջ 1

Նախնական տվյալներով՝ Գյումրիի մեկնած երեք օտարերկրացիներ՝ ամուսիններ Դիմիտրի Անդրեան ու Սոփիո Անդրեան եւ նրանց ընկեր Շոթա Սաղալակելիձեն Գյումրիում նստել էին ժողովարարության մեքենան ու պատվիրել, որ իրենց Սեւան տանի: Ճանապարհին Վրաստանի քաղաքացի ուղեւորներն ալկոհոլ էին օգտագործել: Սեւանի թերակղզում վարորդի եւ ուղեւորների միջեւ վեճ էր սկսվել: Այդ ընթացքում էլ ուղեւորները քարերով խփել էին տաքսու վարորդի գլխին: 26-ամյա երիտասարդը մահացել էր, ուղեւորներն էլ հեռացել էին: 33-ամյա Դիմիտրի Անդրեան ու 35-ամյա Սոփիո Անդրեան դեպքից երկու օր անց հունիսի 2-ին, հայտնաբերվեցին Երեւանի Մոսկովյան փողոցում վարձակալած բնակարանում եւ բերման ենթարկվեցին ոստիկանություն: Նրանց մեղադրանք առաջադրվեց: Դատարանի որոշմամբ նրանք կալանավորվեցին: Օրեր անց հայտնաբերվեց ու կալանավորվեց նաեւ Շոթա Սաղալակելիձեն: Յենց այս քրեական գործի շրջանակներում կատարված մեծածավալ քննչական գործողությունների եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել է կալանավորված ամուսինների կողմից կատարված մեկ այլ առանձնապես ծանր հանցագործություն:

Այսպես, նախորդ տարվա հունվարի 15-ին Երեւանի Սարյան փողոցի 26-րդ շենքի բնակարաններից մեկում հայտնաբերվել էր միայնակ ապրող Անահիտ Ալեքսանյանի դին: Այս փաստով նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել էր, որ մահացածի բնակարանից բացակայում էին ոսկյա եւ արծաթյա զարդեր: Դատաբժկա եզրակացությամբ կնոջ մահը վրա էր հասել մեխանիկական շճահեղձությունից. Անահիտ Ալեքսանյանին խեղդել էին:

Քրեական հետախուզվեցին ու քննիչները համատեղ աշխատանքով պարզել են, որ 2018 թ. հունվարի 13-ին Դիմիտրի Անդրեան եւ Սոփիո Անդրեան հյուրընկալվել են Անահիտ Ալեքսանյանին: Լույս 14-ի գիշերը Դիմիտրի Անդրեան կնոջ հետ թիկունքից մոտեցել են տանտիրուհուն, մի ձեռքով փակել նրա բերանը, որպեսզի չկարողանա օգնություն կանչել, իսկ մյուս ձեռքով՝ խեղդել: Այնուհետեւ ամուսինները հանել են Անահիտ Ալեքսանյանի հագուստը՝ թողնելով միայն ներքնաշորերը, նրան պատկեցրել են մահճակալին, հագուստը խնամքով դասավորել, որպեսզի տպավորություն ստեղծվի, թե անկողնում պառկած հանկարծամահ է եղել, ապա խնամքով հավաքել ու դասավորել են մյուս իրերը՝ հետքեր չթողնելու նպատակով օգտագործելով ձեռնոցներ: Տնից հեռանալուց առաջ հափշտակել են 1 միլիոն 891 հազար դրամ արժողության ոսկյա եւ արծաթյա զարդեր, այլ իրեր:

Որոշումներ են կայացվել արդեն իսկ կալանավորված Դիմիտրի Անդրեանի եւ Սոփիո Անդրեանի մեղադրանքները փոխելու եւ լրացնելու մասին:

Նախաքննությունը շարունակվում է:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

**«Չինանոց-2019» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ստացված օպերատիվ տվյալներն իրացնելով՝ բրեական հետախույզները Ստամբուլ-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահից բերման ենթարկեցին Շուշանիկ Պողոսյանին: 73-ամյա կինը 2007 թվականից ոստիկանության Կումայրիի բաժնի կողմից հետախույզվում էր բրեական օրենսգրքի 132 հոդվածի (մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը) 3-րդ մասի 2-րդ կետի մեղադրանքով: Խափանման միջոցը՝ կալանք: Դիմա այն մասին, թե ինչ գործերի համար էր թուրքիայում բնակություն հաստատած կինը դեռևս տասներկու տարի առաջ արժանացել իրավապահների ուշադրությանը:**



## ԹՎԱԾԳ յալ մոռաց յալը

Տասներկու տարի առաջ քրեական պատասխանատվության ենթարկվեց Սուսանա Պողոսյանը: Նույն գործով մեղադրյալ անցնող քրոջ՝ Շուշանիկ Պողոսյանի նկատմամբ հայտարարվեց հետախույզում: Քրեական գործից անջատված մասի վարույթը կասեցվեց: Սուսանա Պողոսյանի արարքը որակվել էր քրեական օրենսգրքի 262 հոդվածով՝ պոռնկությանը զբաղվելու համար որջեր կազմակերպելը կամ կավատությունը: Ամուսնալուծվելուց հետո քառասունչորսամյա Սուսանա ժրջան աշխատում էր տարբեր սրճարաններում եւ հավաքարար էր, եւ մատուցող: Ավագ ջուրը՝ Շուշանիկը, ամուսնալուծվելուց հետո մեկնեց Արաբական Միացյալ Էմիրություններ: Գնաց Դուբայում աշխատանք ու բախտ որոնելու, որ նրա պատկերացումներով պոռնկությանը զբաղվել էր նշանակում: Զբաղվեց եւ արդյունքում ոչ

կարելուց փողն ու նվերները Դուբայից, իսկ հետո արդեն Ստամբուլից շուտ-շուտ լինեին: Մի օր էլ Շուշանիկը, որ արդեն «բիզնես մտածողություն» ուներ, քրոջն առաջարկեց հարմար աղջիկ գտնել եւ ուղարկել Ստամբուլ՝ մարմնավաճառությանը զբաղվելու: Ինքը բոլոր հարցերը կկարգավորեր՝ ճանապարհածախս, կացարան, «հաճախորդներ»: «Շահավետ գործ» է՝ հեռախոսով ասաց ու հորդորեց ականջի հետեւ չզցել: «Հանձնարարականը» ստանալուն պես Սուսանա հարմար աղջիկ փնտրելու գործին անցավ: Ստամբուլում մարմնավաճառությանը մեծ փողեր աշխատելու առաջարկությունն առաջինը աշխատանքային ընկերություն՝ Լիլիթին արեց: Ընկերության իրաժարվեց: Փոխարենը խոստացավ օգնել թեկնածու գտնելու հարցում,

մանավանդ, որ մեկին արդեն աչքի առաջ ուներ: Խոստմանը համաձայն՝ Լիլիթը հաջորդ օրն իսկ զանգեց եւ «կարելու գործով խոսելու համար» իր տուն կանչեց Արմենուհի Սարգսյանին: Ամուսնալուծվելուց հետո Արմենուհին քաղաքամերձ ռեստորաններից մեկում մատուցողուհու աշխատանքը համատեղում էր մարմնավաճառության հետ: Այնպես որ, Լիլիթը ճիշտ ընտրություն էր արել, միայն թե Արմենուհին համաձայնեց Ստամբուլ մեկնել: Համաձայնեց: «Տեղական հաճախորդներից» հոգնել էր, որոշեց «մեծ աշխարհ» դուրս գալ: Երեկոյան Լիլիթը Արմենուհուն տարավ Սոնայեց տուն: Սուսան

գտնվում. Արմենուհին ոչ միայն բարետես չէր, այլեւ գրավելու, գայթակղելու շնորհ չուներ: Շուշանիկը որոշեց նրան այլ տեղ օգտագործել՝ իր մանկահասակ երեխային կպահեր, տան մաքրությամբ կզբաղվեր: Իսկ վարձը լինելու էր սնվելն ու քնելու տեղ ունենալը: Երկու-երեք ամիս անց Շուշանիկն ազատ արձակեց Արմենուհուն. ինքնաթիռի տոմս գնեց եւ ուղարկեց Հայաստան: Քրոջից սոր աղջիկ պահանջեց, բայց՝ տեսքով, գայթակղիչ, «շուկայի» պահանջներին համահունչ: Սուսան թեկնածու գտավ. գործընկերուհին՝ Տուլյան, համաձայնեց: Բայց ոչ թե մարմնավաճառությամբ զբաղվելու, այլ Շուշանիկի երեխային դայակություն անելու: Շուշանիկը քրոջ բանկային հաշվեհամարին ճանապարհածախսի համար փող փոխանցեց, Տուլյայի փաստաթղթերը ձեռակրպեցին, եւ նա մեկնեց Ստամբուլ: Ստամբուլում, սակայն, ոչ թե դայակություն, այլ մարմնավաճառությամբ զբաղվել էր սպասում: Սկզբում ընդվզեց, բայց հետո ստիպված էր համաձայնել՝ ոչ միայն իր վրա ծախսված փողերի պահանջ դրվեց նրա առջեւ, այլեւ անձնագիրը վերցվեց: Երկու-երեք ամիս Տուլյան սեռական շահագործման ենթարկվեց Շուշանիկի թուրք ամուսնու հյուրանոցում: Մի օր էլ հաճախորդներից մեկի հետ լեզու գտավ, նրա միջոցով դիմեց տեղի իրավապահներին եւ արտաքսվեց Հայաստան: Տասներկու տարի անց, թերեւս, մտածելով, որ իր մասին մոռացել են, Շուշանիկ Պողոսյանը մի քանի օրով եկավ Հայաստան: Միավեց. չէին մոռացել, ավելին՝ «դիմավորեցին» օդանավակայանում: Քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Հասակ ՊՈՂՈՍՅԱՆ

## Երբ հնարավորությունները սպառվում են

Օրերս ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին Երեւանի բնակիչ Գոռ Հախվերդյանին: 17-ամյա Գոռը առաջին անգամ չէ, որ հայտնվում էր ոստիկանների տեսադաշտում: Դեռեւս նախորդ տարվա սեպտեմբերից մեղադրվում է գողություն կատարելու մեջ: Ըստ մեղադրանքի՝ տեխնիկական միջոցներով բացել էր ընկերություններից մեկի խանութ-սրահի դուռն ու գողացել տարբեր ապրանքներ: Ոստիկանության ծառայողները բացահայտել էին հանցագործությունը: Գոռի նկատմամբ խափանման միջոց էր ընտրվել ծնողի հսկողությանը հանձնելը:



Գոռ Հախվերդյանով սկսեցին զբաղվել ոստիկանության Երեւանի բաժնի անչափահասների գործերով ծառայողները. միայնակ մոր խնամքին մնացած տղայի վարքը, նրա շրջապատը մտահոգիչ էին: Անչափահասների գործերով ծառայողները զրուցեցին նրա եւ մոր հետ՝ փորձելով կանխել տղայի անկումը: Սակայն միշտ չէ, որ դաստիարակչական միջոցները արդյունք են տալիս: Նախորդ գործը դեռ դատաքննության փուլում էր, երբ առաջ եկավ երկրորդը: Ըստ այս մեղադրանքի՝ Գոռ Հախվերդյանը լինգով

բացել էր բջջային օպերատորներից մեկի՝ Եղվարդի մանածուղի դուռը եւ հափշտակել հեռախոսներ՝ ընկերությանը պատճառելով կես միլիոն դրամից ավելի վնաս: Ոստիկանության ծառայողները բացահայտել էր առաջադրել, խափանման միջոց էր ընտրվել ստորագրությունը՝ չեռանալու մասին: Մարտի 28-ին Երեւանի կենտրոնում գողություն կատարվեց: Տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին Ռոմանյան փողոցի զեղեցկության սրահներից մեկի դուռն ու գողացել 150 հազար դրամ արժողությամբ խաղալիք եւ 100 հազար դրամ: Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները, այս հանցագործությունն էլ բացահայտեցին: Նրանց տեսադաշտում հայտնվեց նույն Գոռ Հախվերդյանը: Բացատրական աշխատանքի շնորհիվ ապրիլի 4-ին նա ներկայացավ ոստիկանության Կենտրոնական բաժնի՝ բերելով գողոնի մի մասը: Նա ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմնին: Ապրիլի 5-ին քննիչը Գոռ Հախվերդյանին կալանավորելու վերաբերյալ միջնորդություն ներկայացրեց Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանը մերժեց միջնորդությունը, եւ Գոռ Հախվերդյանն այս անգամ եւս ազատ արձակվեց: Ոստիկանության ծառայողները ձեռնարկում են համապատասխան միջոցառումներ՝ Գոռ Հախվերդյանի հնարավոր հանցավոր գործողությունները կանխելու ուղղությամբ: Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

## Խաբարաբեման Տեխնիկայ



Վարսախություն ներշնչելու վերջնական արժանիքն հասնելու համար խարդախները փորձում են ինքնաբերական մարմնին հայտնելով, որ փեսան մաս-մաս խարդախությամբ հափշտակել է խոշոր 1 միլիոն 992 հազար դրամ: Մաս-մասն, անշուշտ, հեղափոխություն հանգամանք է այն առումով, որ կինը նրան հավատարմեցել է մինչեւ 2 միլիոնի շեմին հասնելը, բայց երբ սկսել է պահանջել արժանիք, թեկուզ՝ մաս-մաս, խարդախը դիմակը դնել է նեպել՝ հայտարարելով, թե դա անհնար է: Գուցե հնարավոր դառնա արդեն սկսված նախաքննության ընթացքում կամ դատական համապատասխան վճռով:

Երկրորդ դրվագը եւս ուշագրավ է: Խարդախը Վանաձորի փողոցներից մեկում կարողացել է հերթական գեղին մի քանի ժամում հանձնել իրեն 150 հազար դրամ փող... Կարարվում է քննություն: Ափսոս ՆԱԿՊԵՏՅԱՆ

«02»-ի օպերատիվ իրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

«Յարմար» առիթ

Վարորդներն ապահովագրված չեն մեքենայի խափանումից: Պատահում է՝ ճանապարհի կեսին ինչ-ինչ խնդիրներ են առաջանում, ու թե գլուխ չես հանում, ճամփեգրին կանգնած սպասում ես բանիմաց մեկին:



Գեղարքունիքի մարզի Այրբ գյուղի բնակիչ Ալբերտ Մաթեոսյանն իր «Նիվա»-ով վարողինս էր ուղեորվում: Ճանապարհին, սակայն, մեքենան փչացավ: Շարժիչը գործի գցելու ջանքերը ապարդյուն անցան: Որոշեց փոքր-ինչ դադար առնել, հետո նորից փորձել: Այդ ընթացքում բարձր երաժշտություն էր լսում, երբ

- Էդ բեֆ ես անում, պարոսք երբ ես տարու:

Ալբերտը մի տարի առաջ վարողանից 65 հազար դրամ էր վերցրել, սակայն վերադարձնելն ուշացնում էր:

Ալբերտը նեղորտեց. - Չե՞ս տեսնում մեքենա է փչացել:

Լեզվակռվի ընթացքում իրար տեղը տեղին խփեցին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության վարդենիսի բաժնի աշխատակիցները: Երկուսն էլ խախտել էին քրեական օրենսգրքի 118 հոդվածի պահանջները:

Պիմողների բողոքների բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:



«Գույքային»

Վանաձորցի Վարուժան Ապրեսյանն ու կինը՝ Գայանե Մանուկյանը, անհաշիվ էին: Ի վերջո, Գայանեն երեխաների հետ եւ փան ողջ գույքով փրկափոխվեց թրոջ՝ Մարինեի փուն: Ամուսինները համապետ սեփականություն չունեին, սակայն գույքը պարկանում էր երկուսին եւ այդ

հարցում վեճը շարունակական էր. ոչ մի կողմը զիջելու փրամադրություն չունեւ:

Մի օր էլ Վարուժանը, լինելով ալկոհոլի ազդեցության փակ, զանգեց Մարինեի քրոջ փուն: Պատասխանողը փուն-փրոտին էր: Վարուժանը ցանկանում էր խոսել իր երեխաների հետ, բայց վիճեցին, իրար վիրավորեցին: Վարուժանը հայտնեց Մարինեին եւ սպառնաց, որ կսպանի նրա որդուն՝ Գեորգին: Նայեցինքներից գերծ չմնաց նաեւ Գայանեն, որը ներկա էր հեռախոսավեճին:

Գեորգը փրկեկանալով, որ Վարուժանը հայտնում է՝ զայրացավ: Գնաց նրան հանդիպելու: Վիճեցին, որի ընթացքում Գեորգը բռնեցրեւրով խփեց Վարուժանին: Կատարվածի մասին փրեկեկացան ոստիկանության Բազումի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապարաստման ընթացքում նշանակվեց դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ Վարուժանին պարզանով էր միջին ծանրության վնաս՝ առողջության փրեական քայքայումով:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱՅԱՆ

Ինչո՞ւ են մեր փոքրիկներին հետաքրքրում սարսափելի, դաժան ֆիլմերն ու մուլտֆիլմերը: Բացատրությունը մեկն է՝ հետաքրքիր է, գեղոգ, վառ եւ կարծես թե «խաղում» է նյարդերի հետ:

Երեխային դուր է գալիս, որ ապահով բազմոցին նստած՝ հետեւում է «վախենալու» տեսարանների: Ինքը ապահովագրված է, իսկ ինչ-որ մեկը պայծար է մղում, եւ հաճելի է գիտակցել, որ իրական կյանքում ամեն ինչ լավ է...

Երեխան ողջ դիտումի ընթացքում մասնակցում է գործողություններին եւ շատ է ցանկանում, որ չարը պատժվի: Երեխաների համար դժվար է տարբերակել իրականությունը հորինվածքից, եւ ինչքան երեխան փոքր է, տարբերակումն ավելի դժվար է:

Մասնագետները խորհուրդ են տալիս թույլ չտալ նման ֆիլմերի դիտումը, բայց եթե երեխան կարողացել է ձեռք համոզել, դիտման ընթացքում հետեւեք, թե ինչ է կատարվում ձեր երեխայի հետ: Համարեք, որ թեստ եք անցկացնում եւ դրա հիման վրա կազմակերպեք երեխայի առօրյան, ազատ ժամանակը:

Դիտումից հետո որոշ ժամանակ երեխան դեռ ֆիլմի ազդեցության տակ է եւ վերարտադրում է իրեն դուր եկած տեսարանները: Բայց դա երկար չի ձգվում. մինչեւ երեք տարեկան երեխաների համար՝ երեսուն րոպե, նախադարձականների եւ դարձականների դեպքում՝ մեկից երկու ժամ: Նշված ժամանակամիջոցի ավարտին երեխան պետք է հանդարտված լինի եւ արդեն չպետք է ունենա անսովոր վարք՝ գերլարվածություն, ագրեսիա, արցունքներ...

Երեխային պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել, եթե ֆիլմի դիտումից հետո ողջ օր-



Չարսափելի է, բայց հե՞սափրիիր...

վա ընթացքում, անզամ հաջորդ օրը, ֆիլմի ազդեցության տակ է, ճնշված, դժվարությամբ է շփվում, չի ցանկանում բակ դուրս գալ կամ էլ չափից դուրս ակտիվ է, ագրեսիվ եւ չի ենթարկվում: Եթե երեխան չափից դուրս տպավորվող է եւ այն, ինչ տեսնում է՝ ընդունում է որպես իրականություն, ապա պետք է զրույցների միջոցով հանգստացնել նրան:

Նախ պետք է նրա երեակայությունը ուղղորդել դեպի դրական ընկալումներ: Աշխատեք հարցերի միջոցով, օրինակ՝ ի՞նչ կախարդական միջոց կգտնես, որ փրկես հերոսին, հեքիաթի հերոսներից ո՞ւմ հետ կցանկանայիր հանդիպել, եթե փերի լինեիր, ի՞նչ լավ բան կանեիր: Երեխան ոչ միայն թող պատմի, թե ինչպես կվարվի, այլեւ ցույց տա՝ ինչպես կհաղթի չարին: Թող հարվածի ձեռքով, ոտքով, թռչկոտի, նստի, վեր կենա: Սա կօգնի լիցքաթափվել եւ փոքր-ինչ հանդարտվել: Նրան անպայման բացատրեք, որ ֆիլմում տեսածն ընդամենը հորինվածք է, խաղ է, որ որոշ մարդիկ այդ ամենը պատրաստել են խաղի համար, իրա-

կան կյանքում ամեն ինչ այնպես է, ինչպես եղել է մինչ ֆիլմի դիտումը:

Երեխայի հետ ուսումնասիրեք այն բոլոր անկյունները, որ նրան վախ են ներշնչում: Թվարկեք բոլոր առարկաները, որ տեսնում եք: Թող նրա հիշողության մեջ այդ ամենը տպավորվի, եւ նա հստակ իմանա՝ ինչ կա մահճակալի տակ, անկյունում, խորդանցում...

Եթե երեխան, այնուամենայնիվ, դիտել է սարսափ-ֆիլմ, նրան բացատրեք՝ ինչպես պետք է վարվի կինոհերոսը իրավիճակից դուրս գալու համար: Եթե երեխան անհանգստանում է, բացատրեք, որ իր հետ նման բան չի պատահի, ջանի որ նրան շատ եք սիրում եւ չեք կարող առանց նրա ապրել:

Որոշ ծնողներ գտնում են, որ տանը հեռուստացույց չպետք է լինի: Դա ճիշտ չէ: Հեռուստացույցի բացակայության դեպքում երեխան իրեն հասակակիցների համեմատ ընկճված կզգա: Նրան չի կարելի զրկել հեռուստացույցից: Փոխարենը՝ պետք է ապահովել անվտանգ դիտում: Հեռուստացույցից կտրելու համար հարկավոր է առօրյան այնպես կազմակերպել, որ ազատ ժամանակ ջիչ ունենա: Նախընտրելի է, որ երեխան բակում խաղա, վազվզի, ջան հեռուստացույց դիտի: Նրա համար պետք է ստեղծել հետաքրքրությունների մի մեծ աշխարհ:

Հեռուստացույցը չպետք է երեխայից խլի ընելու ժամանակը: Նույնիսկ ամենահետաքրքիր հաղորդումը չպետք է փոխի երեխայի օրվա ռեժիմը: Նա պետք է գիտակցի, որ չի կարող համոզվել մայրիկին եւ հայրիկին:

Երեխաները շատ են սիրում ընելուց առաջ զրուցել: Օգտվեք նրանց այդ «թուլությունից»:

Պատրաստեք Տաթև ՄեծՈՒՆՅԱ

Չվարձալի ամեհոկագիր

Մարտի 8-ի նվեր

Ոստիկանները, գողության կասկածանքով, բերման են ենթարկել 49-ամյա Արթուրին: Նա խոստովանել է, որ մարտի 8-ին կոստեղիկայի խանութից, օգտվելով աշխատակցուհու անուշադրությունից, գողացել է օծանելիք:

Երեխային, նրա կամքին հակառակ, տարել է տնից:

Նախկին ամուսինը

52-ամյա մի կին հաղորդում է տվել, որ որդու կնոջ նախկին ամուսինը, երեխային տեսնելու պատրվակով, դուրս է կանչել հարսին եւ իր մեքենայով առեւանգել նրան:



Չեռնարկված միջոցառումների եւ բացատրական աշխատանքի շնորհիվ նախկին ամուսինն ու հարսը ներկայացել են բաժին: Հարսը բացատրություն է տվել, որ ոչ ոք իրեն չի առեւանգել, այլ ինքն իր կամքով է հեռացել նախկին ամուսնու հետ:

Սպանել մո՞ղը

Ոստիկանություն է զանգել 64-ամյա մի կին եւ հայտնել, որ որդին անհանգստացնում է իրեն, սպառնացել է սպանել իրեն:

Մեկնած ոստիկաններին կինը մասնավորել է դեպքը: Ըստ նրա՝ հարբեցող որդին, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, վիճաբանել է իր հետ, իսկ երբ ինքը դատարկել է օղու մնացորդը, սպառնացել է, թե կսպանի:

Հարս ու սկեսուր

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ բուժօգնության է տեղափոխվել 67-ամյա մի կին: Նա հայտնել է, որ վնասվածքը ստացել է տանը, ծեծկռուքի ժամանակ:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ կնոջը ծեծել է 36-ամյա հարսը:

Իսկ 46-ամյա մի այլ հարս հաղորդում է տվել, որ վիճաբանության ժամանակ 78-ամյա սկեսուրը ավելով խփել է իրեն եւ պատճառել վնասվածք:

Նախկին կինը

43-ամյա Անահիտը հաղորդում է տվել, որ իրենց տուն են եկել ամուսնու նախկին կինը, նրա հորեղբոր որդին եւ հորաքույրը: Ինքը մուտքի դուռը չի բացել, բայց նրանք հյուրասենյակի պատուհանից մտել են տուն: Հորեղբոր որդին բռնել է իր ձեռքերից, իսկ ամուսնու նախկին կինը իր վեցամյա

կայացել են բաժին: Հարսը բացատրություն է տվել, որ ոչ ոք իրեն չի առեւանգել, այլ ինքն իր կամքով է հեռացել նախկին ամուսնու հետ:

Անկոչ հյուրը

Ոստիկանություն է զանգել 46-ամյա մի կին եւ հայտնել, թե անձանոթ մի տղա մտել է իրենց տուն եւ դուրս չի գալիս:

Ոստիկաններին կինը մանրամասնել է, որ վերադառնալով տուն՝ դուռը բաց է գտել: Մտնելով նկատել է, որ մի անձանոթ քաղաքացի պառկած է մնջասենյակի հատակին: Հետո, առանց որևէ պահանջ ներկայացնելու ու վնաս պատճառելու, տղամարդը հեռացել է:

Չեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է «հյուրի» ինքնությունը: Պարզվել է, որ 34-ամյա տղամարդը տուն էր մտել գողության նպատակով:

Ալկոհոլ, ծխախոտ, հրդեհ

Գիշերը առողջարանում անհայտ անձի կողմից դիտավորությամբ հրկիզվել էր 68-ամյա մի կնոջ անկողնու ներքնակը:

Պարզվել է, որ ներքնակն այրել է կնոջ քրոջ որդին, որը ոգելից խմիչք օգտագործած վիճակում տեսակցության գալով ծխախոտի քնթուկը պատահաբար գցել էր անկողնու:

Քրոջ որդին բաց է թողնվել:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ ապրիլի 18-ից 25-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 27 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր ծեծի եւ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 5-ը՝ գողության, 3-ը՝ խարդախության, 1-ը՝ ակցիդային դրոշմանիշերով եւ (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա չորոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանց ապօրինի իրացնելու, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանց ապօրինի իրացնելու, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների մաքսանենգության համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 4 հետախուզվող: Արձանագրվել է 64 ճանապարհատրանսպորտային պատահար. 5 մարդ զոհվել է, 74-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ: Իրձանագրվել է վրաների 10 դեպք. 2 մարդ զոհվել է, իսկ 8-ը՝ ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Հանրապետության ճանապարհներին

Ապրիլի 23-ին «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Ա. Մանուկյան փողոցում բախվել է ճանապարհի բետոնե պատին. 25-ամյա վարորդը եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Ապրիլի 23-ին «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Մյասնիկյան պողոտայում վրաերթի է ենթարկել 86-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 23-ին Երեւանի Բագրատույնյաց եւ Եղիշե Թաղետոսյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «ԲՄՎ» եւ «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2121»-ի 12-ամյա ուղեւորուհին եւ «ԲՄՎ»-ի 47-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Ապրիլի 23-ին «Յոնակ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Գ. Լճիկի եւ Մայիսի 9-ի փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 20-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 23-ին Աշտարակ-Ազարակ ճանապարհի 5-րդ կմ-ին իրար են բախվել «Տոյոտա» եւ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2107»-ի 32-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 23-ին «ԳԱԶել» մակնիշի ավտոմեքենան Վանաձոր-Ալավերդի ճանապարհի 4-րդ կմ-ին դուրս է եկել երթուղուց դուրս եւ բախվել ժայռին. 38-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 24-ին անհայտ ավտոմեքենայի վարորդը Երեւանի Բագրատույնյաց եւ Սողոմոն Տարոնցու փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել մի քաղաքացու, որը տեղում մահացել է: Նույն օրը ոստիկանության Շենգավիթի բաժին է ներկայացվել 27-ամյա քաղաքացի եւ հայտնել, որ նշված վրաերթը կատարել է ինքը՝ իր «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով:

Ապրիլի 24-ին «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւան-Մեղրի ճանապարհի 298-րդ կմ-ին վրաերթի է ենթարկել մի քաղաքացու, որը տեղում մահացել է, ապա մեքենան բախվել է կայանված «Տոյոտա Իպսուն» մակնիշի ավտոմեքենայի, որն էլ իր հերթին բախվել է կայանված «Ֆոլքսվագեն Վենտո» մակնիշի ավտոմեքենայի:

Ապրիլի 24-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Մեղրի ճանապարհի 123-րդ կմ-ին դուրս է եկել երթուղուց դուրս եւ շրջվել վարորդը տեղում մահացել է:

Ապրիլի 24-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան Արարատի մարզի Ազատական գյուղում դուրս է եկել երթուղուց դուրս եւ շրջվել. 31-ամյա վարորդը եւ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Ապրիլի 24-ին «Նիսան Տիդա» մակնիշի ավտոմեքենան Կոտայքի մարզի Գառնի գյուղի ճանապարհին բախվել է արգելապատնեշին. 31-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Ապրիլի 24-ին Երեւանի Արթուրյան եւ Իսահակյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Մերսեդես» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 49-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 24-ին Երեւանի Արցախի փողոցում իրար են բախվել «Մերսեդես» եւ երկու «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի եւ «Օպել»-ներից մեկի վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Ապրիլի 24-ին «ԿԻՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Գ. Ավետիսյան փողոցում վրաերթի է ենթարկել 80-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 25-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան Եղվարդ-Նոր Գեղի ճանապարհի 4-րդ կմ-ին դուրս է եկել երթուղուց դուրս եւ կողաշրջվել. 48-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

## Սկիզբը՝ նախորդ համարում

Սուլազարների մասին խոսելիս հարկ է նկատել, որ նրանց շարքերը հաճախ համարվում են հենց չափազանց սիրված ու փայփայված երեխաներով: Օրինակ, երեխային սիրում ու երես են տալիս, նա տարիներ շարունակ մեծանում է գերիվանավորության միջավայրում: Եվ ահա զայիս է դարձրոց զնալու ժամանակը (մանկապարտեզը, որպես կանոն, «շրջանցվում» է), ու «ամենա-ամենա» երեխան մեն-մենակ է մնում իրականության հետ: Պարզ է, որ տան պայմաններում «փչացած» բնավորությամբ նա չի կարող դիմակայել իր պես 20-25 «ամենա-ամենաների» գրոհին, ուսուցչի դիտողություններին, բոլորից մեկը լինելու իրողությանը: Ու սկսվում է բնավորության վերջնական խեղումը՝ սկիզբ տալով որոշակի մոլությունների ձեւավորմանը...

Եզրակացությունը մեկն է. շեղումները միշտ անխուսափելի են այնտեղ, որտեղ ակնհայտ են ծայրահեղությունները: Օրինակ, ցանկացած երեխայից կարելի է մոլագար «ծեփել», եթե նրան չթույլատրվի ոչինչ, ամեն ինչում երեխան ճշվի ու նվաստացվի, կամ, հակառակը, լինի ամենաթողություն, ու երեխան ոչ մի մեթոդ չստանա: Դաստիարակության այս երկու տարբերակն էլ կարող են հանգեցնել աղետալի հետեւանքների:

Եվս մեկ չարագուշակ նախանշան է, երբ երեխան սկսում է չարչարել կենդանիներին ու թռչուններին: Հաճախ այդ «անմեղ» գործողությունների հետեւում թաքնված են ենթագիտակցական մղումներ, որոնք, ի վերջո, կարող են հանգեցնել սոսիալիզմի ձեւավորման, ինչպես եւ գոհի նվաստացման կամ ոչնչացման միջոցով ինքնահաստատման մոլության:

Երեխայի դաստիարակության միակ ճշմարիտ ճանապարհը համարժեք եւ անաչառ զնահատումն է նրա մտքերի, արարքների, գործողությունների, իր տարեկիցների մեջ նրա իսկական տեղը, դիրքն ու նշանակությունը արձանագրելը, ինչը հետագայում հիմք կդառնա նաեւ

սուբյեկտիվ ինքնագնահատման համար՝ նրան արդեն չափահաս տարիքում գերծպահելով գերազնահատման ու թերազնահատման վտանգներից:

Այսպիսով, միշտ չէ, որ մոլագարների գործողությունները պետք է պատճառաբանել վրեժխնդրության զգացումով: Դա նաեւ վտանգավոր մտայնություն է.



# Ուշադրություն. մոլագար է

Նման բացատրության պարբերական կրկնությունը ուղիղ ճանապարհով հանգեցնում է մոլագարի բարոյական արդարացման:

Իրականում, սպանելով մոլագարը միայն «սնունդ է տալիս» իր հաճույքների կենտրոնին՝ հաճախ ինքն էլ չգիտակցելով կամ մասամբ գիտակցելով դրդապատճառը:

Այս պարագայում գուցե թե ժամանակն է խոսել նաեւ մեղսունակության մասին: Մեր հոգեբուժական համակարգը, ցավոք, միշտ չի կարողանում հասարակությունից լիովին մեկուսացնել անմեղսունակ մարդուն, ինչով հնարավոր է դառնում հատկապես սադիստական շեղումներ կամ այլ կարգի մոլություն ունեցողների գործողությունների իրականացումը, որոնք հանգեցնում են ողբերգական հետեւանքների:

Վտանգավոր է նաեւ այն, որ անմեղսունակ կամ մասամբ մեղսունակ մոլագարը, իր մոլություններով տարված, «երկրորդ

կյանք» է վարում, այսինքն տեղի է ունենում անծի տրոհում, եւ այդ «կյանքը» այնքան առաջնային է, որ ծանոթներն ու հարազատները հաճախ չեն տեսնում նրա իսկական կյանքը, իրական ներաշխարհը: Բոլորն ուշքի են գալիս, երբ աղետն արդեն կատարված է լինում, ու բացահայտումից հետո զարմանում են, թե ինչպես կարող էր խաղաղ, անվնաս մարդը մոլագար լինել...

Սուլազարներ, այնուամենայնիվ, մեր հասարակության մեջ կան, ուստի եւ ծագում է նրանցից պաշտպանվելու, կանխարգելման անհրաժեշտությունը: Նախ եւ առաջ պետք է ունենալ այն, ինչ մոլագարն ի սկզբանե չունի՝ ինքնավստահություն: Սուլազարը հարձակվում է ոչ թե ցանկացած գոհի, այլ հատկապես նրա վրա, ում կարող է կաթվածահար անել իր գործողություններով. նա զգում է գոհի հոգեբանական թուլությունը: Հետեւաբար պետք է պատրաստ լինել բռնությանը բռնությամբ պատասխանելու, չնայած հաճախ մոլագարի վրա նետված մի «ուժեղ» ու ինքնավստահ

հայացքն էլ բավական է հարձակումը կասեցնելու համար:

Իհարկե, այս ամենի հետ միասին պետք է պահպանել նաեւ, այսպես ասած, անձնական անվտանգության կանոնները: Օրինակ, եթե կանչել եք վերելակը, ու ձեզ հետ խցիկ է մտնում անձանոթ մեկը, սպասեք մինչեւ ծանոթներ կհայտնվեն: Խուսափեք խոլ վայրերում միայնակ շրջելուց, չստուգված մարդկանց հրավերն ընդունելուց, կասկածելիների հետ շփումներից:

Եվ այսպես՝ օրվա բոլոր ժամերին ու ցանկացած միջավայրում՝ անհատական անվտանգության կանոնների պահպանում գումարած ներքին ինքնավստահությունն ու բռնությանը հակահարված տալու պատրաստակամությունը: Համոզված եղեք, որ նման իրավիճակներում ավելի լավ է գերզոնություն ցուցաբերել, քան տրվել հանգամանքների ընթացքին, ինչը լավագույն պայմաններ է ստեղծում մոլագարի «գործունեության» համար...

# 1990-ականների մերձմուսկովյան ավազակախմբերը

## Սկիզբը՝ նախորդ համարում

1993 թ. սկզբին Մեղվեդեղեկյան եւ Օրբխովյան հանցախմբերը միավորվեցին Սերգեյ Տիմոֆեևի (Սիլվեստեր) գլխավորությամբ, որպեսզի կարողանան հաշվեհարդար տեսնել մրցակիցների հետ: Սիլվեստերը համարվում էր Մոսկվայի հանցաշխարհի պարագլուխը:

1994 թ. սեպտեմբերի 13-ին Սիլվեստերը զոհվեց, ինչից հետո Գրիշա Մեւերնին հայտնվեց վտանգավոր դրության մեջ. Նախատեսվում էր լուրջ բախում մեկ այլ՝ Պողոսյան հանցախմբի հետ: Գուլայտինսկին նրանցից 16 հազար դոլար էր վերցրել՝ խոստանալով բանտից ազատել Պողոսյան հանցախմբի մի քանի անդամի, սակայն այնպես է ստացվում, որ նրանք ազատության մեջ են հայտնվում առանց Գուլայտինսկու օգնության: Պողոսյանցիները պահանջում են վերադարձնել իրենց գումարը, սակայն ազգահուլայտինսկին որոշում է փողը չվերադարձնել եւ իր հանցախմբի մարդասպանի միջոցով զնդակահարում է խմբավորման երեք անդամների. դա նշանակում էր պատերազմ երկու խմբավորումների միջեւ:

Գուլայտինսկին զգում էր, որ իր հանցախմբում հասունանում է երկպառակություն՝ Պիլե եղբայրները հեղինակություն էին ձեռք բերում: Միակ մարդը, որին Գուլայտինսկին վստահում էր, մարդասպան Ալեքսեյ Շերտոբիտովն էր, սակայն ուժերն անհավասար էին, ուստի Գրիշա Մե-

րնին որոշում է Լյոշա Սուլազարի հետ պատասխանել Ուկրաինայում եւ այնտեղից հետեւել իրադարձությունների զարգացմանը:

Գուլայտինսկու հեռանալուց հետո Պի-



լե եղբայրները, ցանկանալով միայնակ ղեկավարել հանցախումբը, կեղծ տեղեկություն տարածեցին՝ իբր Գրիշա Մեւերնուն ձերբակալել է միլիցիան եւ նա, պատժից խուսափելու համար, իրավապահ մարմիններին հայտնել է հանցախմբի վերաբերյալ բոլոր տեղեկությունները: Դա նշանակում էր Գուլայտինսկուն մահվան դատապարտել:

Ուկրաինայում ճակատագիրը Գուլայտինսկուն «պարզեցեց» միայն կես տարվա կյանք, չնայած գրեթե ամեն օր փոխում էր հյուրանոցը: Նրան այն աշխարհ ուղարկեց իր մտերիմ Լյոշա Սուլազարը, որին Գուլայտինսկին համարում էր հավատարիմ եւ անդամաճան: Ենթադրվում է, որ Լյոշա Սուլազար նման բայի դիմել էր

երկու պատճառով՝ նախ ուժը Պիլե եղբայրների կողմն էր եւ վրեժխնդիր եղավ ընկերոջ՝ Լուկյանչիկովի սպանության համար:

Պիլե եղբայրները շարունակում են հանցավոր գործունեությունը Մոսկվայում: Գլխավորելով հանցախումբը՝ նրանք սկսում են զգալով ավազակախմբի թմրամոլ եւ հարբեցող անդամներից: Թմրամոլներին ներարկում էին մեծ չափաբաժնով հերոին, ինչից հետո մարմինը թաղում էին աղբանոցներում: 1997 թ. այդպիսի ճակատագրի արժանացավ Անդրեյ Պիլեի սանիկ Ռոմա Մոսկվան: Մի քանի թմրամոլ ավազակներ էլ անհետ կորան. մի մասին «հազգրին» բետոնե երկարաճիտ կոշիկներ, որպեսզի ջրի երես դուրս չգան, ու նետեցին ջրամբարները, իսկ մյուսներին թաղեցին նորակառույց շենքերի հիմքերում:

Ժամանակ առ ժամանակ Պիլե եղբայրները ստուգում էին ավազակախմբի անդամների հոգեկան պիտանիությունը: Այդ գործը հիմնականում ստանձնել էր Անդրեյ Պիլեը. հանցախմբի անդամներից որեւէ մեկին հրավիրում էր շախմատ խաղալու, որի ընթացքում ուշադրությամբ հետեւում էր նրա շարժումներին, դեմքին, հետո որոշում էր, թե որքան ժամանակ կարելի է նրան «օգտագործել» կամ որքան ժամանակ է նրան մնացել հանդերձյալ աշխարհում հայտնվելու համար:

Շարունակելի  
Պատրաստեց Ռուբեն ՍԱՅՎԱԿԱՆԸ

# Տեղեկատվության ազատության սահմանափակում

**Տեղեկատվության ազատությունը խոսքի ազատության առանցքային տարրերից է, որն ամրագրված է Սահմանադրությամբ: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն արտահայտելու իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը: Բայց եւայնպէս, կան տեղեկատվության ազատության որոշ սահմանափակումներ:**



Ոստիկանության ծառայության գործունեության մասին տեղեկություն ստանալու իրավունքը սահմանափակվում է հետեւյալ դեպքերում՝ երբ այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով, եւ երբ այդ սահմանափակումն անհրաժեշտ է իշխանության կողմից սպառնալու պաշտպանության համար:

Սահմանափակումը նախատեսված է օրենքով՝ նշանակում է, որ տվյալ սահմանափակումը պետք է իրավական հիմք ունենա: Օրենքը, որով նախատեսված է սահմանափակումը, պետք է բավարար հստակությամբ մատնանշի իրավասու մարմնի կողմից, տվյալ դեպքում՝ ոստիկանության կողմից տեղեկատվության ազատության սահմանափակման հստակ հիմքերը, սահմանները եւ դրանց իրականացման կարգը:

Ասացիք՝ տեղեկատվության սահմանափակումն անհրաժեշտ է իշխանության կողմից սպառնալու պաշտպանման: Ըստ այդմ՝ տեղեկատվության տրամադրումը մերժվում է, եթե այն պարունակում է պետական, ծառայողական, բանկային կամ

առեւտրային գաղտնիք, խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախաբանության տվյալներ, խախտում է հեղինակային եւ հարակից իրավունքները:

Տեղեկատվության ազատությունը սահմանափակվում է նաեւ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Նկատելք, որ ոստիկանության կողմից տեղեկատվության տրամադրումը մերժելու պատճառաբանության ամենատարածված հիմքերն են՝ գաղտնիության ռեժիմի պահպանման, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անմեղության կանխավարկածի, նախաբանության տվյալների պաշտպանման անհրաժեշտությունը:

Ոստիկանության թափանցիկ եւ հրապարակային գործունեության բաղաբաժնի իրականացման շրջանակներում, երբ խոսքը վերաբերում է լրագրողներին որեւէ գործի հանգամանքների հետ կապված տեղեկատվության տրամադրմանը, հաճախ որոշ տեղեկություններ պարզապես չեն տրամադրվում այն հիմնավոր

մամբ, որ դրանք տվյալ անձի անձնական կամ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություն են: Անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը սահմանված է Սահմանադրությամբ (23-րդ հոդված):

Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ոստիկանության կողմից լրատվամիջոցներին որոշ տեղեկատվություն չտրամադրելը, ըստ այդմ, պայմանավորված է անմեղության կանխավարկածի սկզբունքով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը, սակայն, չի կարելի ընկալել ծայրահեղ ձևով՝ անտեսելով մյուս կողմի իրավունքներն ու ազատությունները: (օրինակ, գոլաշագանակային կառավարումը են վտանգ ներկայացնող անձի տվյալները կամ ցուցադրվում է նրա լուսանկարը: Ավելին, սա դիտվում է որպես ոստիկանության մարդու եւ հասարակական անվտանգության ապահովմանն ուղղված պարտականություն):

Նրապարակայնության, թափանցիկ աշխատանքի արդի ժամանակներում հանրային տեղեկացվածության ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է, բայց եւայնպէս տեղեկատվության ազատության կարեւոր նախապայմաններից է պատշաճ պահպանումը: Այսինքն, տեղեկատվությունը պետք է լինի ստուգված, հավաստի, պարունակի հիմնավորումներ, ստացված լինի իրական աղբյուրներից եւ համապատասխանի իրականությանը:

**ՆԱՄԻԿ ԴՈՂՈՍՅԱՆ**

## Գողություն Առինջում



դյուրակիր համակարգիչ:

Առանձնատան տարածքը հսկվում էր տեսանկարահանող սարքերով, եւ դեպքի վայր մեկնած Կոտայքի ոստիկանները ուսումնասիրեցին տեսագրությունները: Տեսասարքում երեւաց նաեւ կատարողը:

Հարուցվեց քրեական գործ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ որոնողական միջոցառումների արդյունքում Կոտայքի քրեական հետախույզներին հաջողվեց պարզել տեսանյութում երեւացող քաղաքացու ինքնությունը: Ըստ նախնական տվյալների՝ Նոր Նորքի բնակիչ Արայիկ Բարսեղյանն էր:

Ապրիլի 3-ին ոստիկանության Կոտայքի բաժնում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա Կոտայքի մարզային վարչության, ոստիկանության Նոր

Նորքի եւ Արմավանի ընկերական բաժինների ծառայողների համատեղ միջոցառման արդյունքում Ֆրվեժ գյուղի տներից մեկից, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեցին Արայիկ Բարսեղյանը՝ իր վարած «Կիա» ավտոմեքենայով, եւ ընկերը՝ Էրիկ Սկրտչյանը:

Ոստիկանության Կոտայքի բաժնի եւ Արմավանի ընկերների համատեղ օպերատիվ-ընկերական միջոցառմամբ հիմնավորվեց, որ մարտի 19-ին Առինջ գյուղում գողությունը կատարել է Արայիկ Բարսեղյանը:

Հաջողվեց նաեւ մայրաքաղաքի ոսկու շուկայում ոսկու առեւտրով զբաղվող անձի մոտից հայտնաբերել եւ առգրավել գողույթի մի մասը:

Արայիկ Բարսեղյանը եւ Էրիկ Սկրտչյանը կալանավորված են:

Քննությունը շարունակվում է:  
**Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՅԱՆ**

## Բացահայտում են վաղարշապատի ոստիկանները

Ապրիլի 3-ի գիշերը Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղի փնտրից մեկը թալանվել էր: Գողությունը կարարվել էր առանձնատան երկրորդ հարկի ննջասենյակից: Մտնել էին մուտքի չկողպված դռնով: Տանփերերն առաջին հարկից բարձրացել էին ու փնտրել, որ երաժշտական սրբաբանարային գործիքը ննջարանում չի. ահագանգել էին ոստիկանություն: Քրեական գործ հարուցվեց:



վությունը էլ բացահայտումը ավարտին հասցրին: Բնակարանային գողությունը կարարելու մեջ կասկածվող անձի ինքնու-

թյունը ճշմարտացի հետաքննությունն ուղղակի անցրեցին որոնողական միջոցառումները:

Օպերատիվ փնտրանքներում հայտնված Նարեկ Խլղաթյանը հայտնաբերվեց Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղում եւ կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանության Վաղարշապատի բաժնի, ապա ներկայացվեց ընկերական բաժնի, որպեսզի փնտրվեց ինքնախոստովանական ցուցմունք: Ներագա միջոցառումներով իրավապահները Նարեկ Խլղաթյանի փանը հայտնաբերեցին նաեւ գողույթը:

Նախաքննությունը շարունակվում է:  
**Մարտին ՄԻՄՈՆՅԱՆ**



Բռնկվեց դեպքի վայրում

Ապրիլի 18-ի գիշերը Արթիկում Պարույր Մեռակի փողոցի մի փնտրից փորձել էին գողություն անել: Երեք երիտասարդ պարունակով մտնել էին փուն: Տանփնտրելով, որ երեխայի հետք չեն տեսնում, լսելով նրանց ուրախաձայնը՝ ամուսնուն էր զանգել, ամուսինն էլ՝ ոստիկանություն:

Ահագանգը ոստիկանության Արթիկի բաժնում «տալանալ» ազդանշանի պես հնչեց: Կինն ու երեխան մենակ էին, զարգացումներն՝ անկանխաբեկ: Նարեկյանը էր թույլ առաջ դեպքի վայր հասնել. յուրաքանչյուր վայրկյանը կարող էր ճակատագրական լինել:

Ոստիկանների պրոֆեսիոնալ գործողությունների շնորհիվ երեքն էլ բռնվեցին գողույթ ձեռքին: Մարտիկները ջրհեղուկները համար անգամ ձեռնոց էին հագել, բայց գործը մարտահերթի չհասավ:

Իրավապահները ճշմարտությունը հետաքննեցին: Արթիկից էին: Արթուր Մարգարյանն անջափանհաս ընկերների հետ էր գողության գնացել: Նրանց անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին փող, ոսկեդրամ, բանկային քարտեր, ժամացույցներ, դանակ ու էլեկտրահարիչ:

Դժվար է ասել՝ իրադարձություններն ինչ ընթացք կստանան, եթե բնակարանագողերը նկատվեն, որ փանտիքներն արթուն է, կամ եթե իրավապահները ուշանային:

Նարուցվել է քրեական գործ:

## Գրպանահատը հայտնաբերվեց



Ապրիլի 14-ի երեկոյան օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Շենգավիթի բաժնում ահագանգ ստացվեց. թիվ 41 երթուղու միկրովտուբուսում մի կնոջ պայուսակից դրամապանակ էին հափշտակել:

Ոստիկանության Շենգավիթի բաժնի ծառայողները համապատասխան միջոցառումներ ձեռնարկեցին: Որոնողական աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության Զարբախի բաժնումուքի եւ երեւան բաղաբի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժնումուքի ծառայողները: Դեպքից մեկ օր անց գողությունը բացահայտվեց: Բաղրամյան պողոտայից ոստիկանության Շենգավիթի բաժնի բերման ենթարկվեց Կոնդի բնակիչ Ռուստամ Մամեդովը եւ խոստովանեց կատարածը:

Նախապատրաստվում են կյուբեր:  
**Գոռ ՎԱՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ իրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Քարծրակարգ բժշկություն ունենալ պետք է, բայց առողջ ապրելակերպն անհրաժեշտություն է, այլապես անվերջ ստիպված ես զանգել 1-03:

Տեխնիկայես հագեցած պրոֆեսիոնալ հրշեջ ծառայություն ունենալ պետք է, բայց հակահրդեհային կանոնները պահպանելն անհրաժեշտություն է, այլապես հաճախ ստիպված ես զանգել 1-01:

Քարծրակարգ, տեխնիկայես հագեցած ու պրոֆեսիոնալ ոստիկանություն կա, բայց գույքը ճիշտ տնօրինելն ու հուսալի պահպանելն անհրաժեշտություն է:

Անդրադառնալով բնակարանային գողություններին: Խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու համար դիմենք նաև բանախոսությանը:

Կատարյալն այն կլինի, եթե գողություն չլինի ընդհանրապես, բայց մարդկության ողջ պատմությունը գալիս է ապացուցելու, որ դա երբևէ չի եղել, ուստի: Եղել են ու կան մարդիկ, որ գողությունը դարձնում են մասնագիտություն, ապրելակերպ, գոյատևման միջոց, եւ հենց սրանց մասին է ժողովրդական ասույթը՝ «Սեւին սապոնն ինչ կանի, խելին՝ խրատը»:

Գողության ու գողի մասին դարեր ի վեր ժողովուրդը իր մոտեցումները խտացրել է առած-ասացվածքներում եւ ավանդել սերնդեսերունդ: Այդ ասույթներն ուղղված են եւ գողերին, եւ, այսօրվա տերմինաբանությամբ՝ տուժողներին: Տուժողների դեպքում դրանք առավելապես զգուշացնող, կանխող բնույթի են: Օրինակ, ավելի պարզ խորհուրդ դժվար է մտածել, քան այս մեկը՝ «Դուռը փակ պահիր, հարեւանիդ գող մի ասա»: Սա մեծապես վերաբերում է հենց բնակարանային գողություններին:

Բնակարանային գողությունը կանխելու համար այսօր բավական չէ միայն դուռը փակ պահելը: Դռանը որակյալ փական դնելն, իհարկե, պարտադիր է, բայց առաջին եւ երկրորդ հարկերում բնակվելիս պակաս կարեւոր չէ նաեւ պատուհաններին երկաթե ճաղավանդակներ ունենալը: Ինչ վերաբերում է գյուղական վայրերում կատարվող գողություններին, կյանքը ցույց է տալիս, որ այս դեպքում մեր քաղաքացիներն ավելի անփույթ են: Հենց նման վայրերից ստացված հաղորդումներում է հաճախ հայտնվում չարչրկված արտահայտությունը՝ օգտվելով դուռը կամ պատուհանը բաց լինելու հանգամանքից: Ավելի հաճախ այս արտահայտությունն օգտագործվում է անասնազոոությունների դեպքում, ու տպավորություն է, թե գոմի դռանը կողպեք դնելը մարդիկ համարում են ավելորդ ճոխություն: Այնինչ դա անհրաժեշտություն է, առաջին անհրաժեշտություն, բայց այդ մասին մյուս անգամ:

Քանի հիշեցիք անասնազոոությունը, հիշենք նաև մեկ այլ հայտնի ասույթ՝ «Գո- ղը որ տնից լինի, կովը երդիկից կհանի»: Սա եւս մի կարեւոր զգուշացում է պոստեմ- ցիալ տուժողներին, ասել է, թե՛ բոլորիս: Բոլորովին պարտադիր չէ ամեն մի ծանոթ- բարեկամի, նույնիսկ տան բոլոր անդամներին մանրամասն նկարագրել, ասենք՝ զարդեղենի քանակն ու պահոցի տեղը: Պարտադիր չէ նաև, որ բոլորը տեղյակ լինեն, թե ձեր որդին խոսքից ինչքան փող է ուղարկում, եւ թե հատկապես որ բարձի տակ եք պահում այդ փողը: Հիշեք, որ ձեր մոտիկներն էլ մոտիկներ ունեն, որոնց հետ անկեղծ կիսվում են: Եվ ընդհանրապես, այստեղ նույնիսկ ցանկություն է առաջա- թյուն անելու եւս մի միջոց: Սա եւս մեկ հնարավորություն կլինի էականորեն կր- ճատելու այն քառասունյակ ժամկետը, որը գողերի համար մեծահոգաբար նախատես- ել է ժողովրդական մյուս, փոքր-ինչ կո- պիտ հնչող հայտնի առածը: Եվ հետո, «ձու գողացողի» ձեռքը ժամանակին բռնելու դեպքում ավելի մեծ է հույսը, որ ուղիղ ճա- նապարհից շեղված անփորձ գողը դարձի կգա: Հայտնի բան է, որ հաջող ձեռնարկները մղում են մոր գործերի, ավելի ու ավելի հանդուգն ու խոշոր գործերի: Ուրեմն, որ- քան շուտ՝ այնքան լավ նաև հենց նրա՝ ձու գողացողի համար, իսկ սա արդեն բխում է բոլորիս ու յուրաքանչյու- ռիս, օրինապահ հանրու- թյան շահից:

Իհարկե, ժողովրդական բանասիրությունը չունի պատրաստի դեղատոմսեր բոլոր տարբերակների հա- մար: Բազմաբնակարան շենքում ապրողի համար դժվար է գտնել դարերի փորձությունն անցած ասույթ: Ստիպված հույսը պետք է դնենք մեր համեստ հնարա- վորությունների վրա եւ ասույթ հնա- ռենք, օրինակ՝ այսպիսի իրավիճակի համար:

Հայտնի է, որ բնակարանագողերը հիմնականում նախօրոք պատրաստ- վում են: Շքամուտքի այս կամ այն բնակարանի դռան արանքում լուցկու հետիկ են դնում, կամ որեւէ ընկերու- թյան, տաքսի ծառայության, խանութի այցեքարտ փակցնում: Նպատակը պարզ է. եթե մեկ-երկու օր հետո կր- կին գան ու տեսնեն, որ լուցկու հա- տիկը կամ այցեքարտը տեղում է ուրեմն այդ բնակարանում չեն բնակվում կամ եր- կար ժամանակով բացակայում են: Իհար- կե, կարելի է պարզապես դրսևորել քաղա- քացիական բարձր գիտակցություն եւ ուշ- ադիր լինել թե սեփական, թե հարեւանե- ռի դռներին փակցված գանազան թղթեր տեսնելիս: Մի զլացեք, պոկեք թուղթը: Իսկ եթե գիտակցության խնդիր կա, պարզա- պես հիշեք, որ մի օր էլ կգործի մեր նորաս- տեղծ, դեռևս ժամանակի փորձությունը չբռնած ասույթը՝ հարեւանիդ տունը թալա- նողը մի օր էլ թո տուն կմտնի:

Տարբերակներ շատ կան, բայց գողու- թյունների լավագույն կանխումը կլինի հա- սարակության բացահայտ անհանդուրժո- ղական վերաբերմունքը հանցաշխարհի բո- լոր դրսևորումների հանդեպ, այն գիտակ- ցությունը, որ ամենամեծ բարոյականություն- անք օրենքների տառին եւ ոգուն համահունչ ապրելն է: Իսկ քաղաքակիրթ հասարակու- թյուն ձեւավորելու ճանապարհին անհրա- ժեշտություն է քաղաքացիների եւ ոստիկա- նության սերտ համագործակցությունը:

Ոստիկանությունը պատրաստ է բացա- ռապես օրինական միջոցներով պայքարել բոլոր արատավոր երեւույթների, նաև՝ գո- ղությունների դեմ: Եվ թող իմանա ուրիշի հաշվին իր բարեկեցությունը փնտրող ամեն ոք, որ սրտի դողով ամեն օր պետք է սպասի իր ժամին: Չմոռանա՞ք, որ գողերի մասին ամենահայտնի ասույթներից մեկն էլ այս է՝ «Գող՝ սիրտը դող»:

Սարտուն ՍԻՄՈՆՅԱՆ



Սարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Սարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Սարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Սարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Սարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Սարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

# Կողոպուտը բաժնակցներին



Ապրիլի 5-ի երեկոյան ոստիկանության իջեւանի բաժնում մի կին կողոպուտի վե- րաբերյալ հաղորդում տվեց: Նրա հայտնա-

ծով՝ քաղաքի Անկախության փողոցում բայելիս անձանոթ մեկը հափշտակել էր դրամապանակը, որի մեջ կար 510 հազար դրամ, ոսկյա մատանի, բանկային եւ գեղջի բարտեր: Նախնական հաշվարկով՝ նրան պատճառվել էր 700 հազար դրամի վնաս: Դեպքի առթիվ Տավուշի մարզային բնեշակական վարչությունում կողոպուտի հատկանիշներով բրեական գործ հարուց- վեց: Իջեւանի ոստիկանները սկսեցին օպերատիվ-հետախուզական միջոցառում- ները՝ հանցագործությունը թարմ հետքե- րով բացահայտելու նպատակով: Հետեւո-

ղական աշխատանքի արդյունքում բրեա- կան հետախույզները պարզեցին հանցա- գործությունը կատարելու մեջ կասկածվո- ղի ինքնությունը:

Իջեւանի բնակիչ Սուրեն Ավայանը, տարված բացատրական աշխատանքի շնորհիվ ներկայացավ ոստիկանության իջեւանի բաժին: Նրա անձնական խուզար- կությանը հայտնաբերվեց 245 հազար դրամ, մատանի, բանկային ու կուտակային բարտեր, բանկային բարտի գաղտնաբա- ռով թուղթ եւ այլ իրեր: Հայտնաբերվել եւ առգրավվել է նաև դրամապանակը՝ գեղջի բարտերով:

Նախաքննությունը շարունակվում է: Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:



Large crossword puzzle grid with various clues in Armenian. The grid is filled with letters and numbers, with some cells containing words or phrases.

Ուշադրություն (Attention) section containing information about the National Police and a list of phone numbers for various services.

Կտույն - Հանգամանքները բարեհաջող են ակտիվ գործողությունների և ձեռքբերումների համար:

Աստղագիտական շաբաթը - Անձնական կյանքի կայունությունը կախված կլինի մարդկանց հետ շփվելու ձևերից:

Ֆորձեք - Փորձեք դրական կողմեր գտնել և պահպանել ներքին հավասարակշռությունը:

Քույր - Պետք է լուրջ ընդունել շրվյալի շաբաթը հաջողությամբ:

Փորձեք լուծել (Solve the puzzle) section with two chessboard diagrams and their solutions. Diagram 1 shows a chessboard with pieces on squares A1, B2, C3, D4, E5, F6, G7, H8. Diagram 2 shows a chessboard with pieces on squares A1, B2, C3, D4, E5, F6, G7, H8.

Նախորդ համարի սկզբնական պատասխանները (Answers from the previous issue) section containing a grid of numbers and a small portrait of a man.

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան: Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 25.04.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950: Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը՝ «02»-ին պարտադիր է: Զպատվիրված նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատու և պատվիրատու է: